

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ

(Մահվան 50-ամյակի առթիվ)

Հ. Գ. ԽՇՏՈՒՆԻ

Հիսուն տարի առաջ՝ 1915 թ. ապրիլին թուրքական յաթաղանի զոհը դարձան արևմտահայ մտավորականության բազմաթիվ գործիչներ՝ գրողներ, արվեստագետներ, հրապարակագիրներ և մշակույթի այլ ականավոր ներկայացուցիչներ։ Դրանց մեջ էր նաև Դանիել Վարուժանը՝ հայ բանաստեղծության ամենատաղանդավոր դեմքերից մեկը, որի ստեղծագործությունը ուրույն տեղ ունի XX դարի մեր պոեզիայի մեջ։

Սկսած XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի սկիզբը հայ մշակույթը տեղատվություններով հանդերձ մեծ վերելք էր ապրում։ Դա, հիմնականում, ազգային զարթոնքի և ազատագրական բուռն ձգտումների արդյունք էր։ Մեր դարասկզբից զարգացման հետաքրքրական շրջան ապրեց մանավանդ արևմտահայ պոեզիան։ Ընդամենը մի քանի տարում իրար ետևից ասպարեզ իջան այնպիսի բանաստեղծներ, ինչպիսիք էին Դ. Վարուժանը, Սիամանթոն, Մ. Մեծարենցը, Վ. Թեքեյանը, Ռ. Սևակը, — գրական ամբողջ մի համաստեղություն։ Այդ սերունդն իր ստեղծագործություններում առաջ քաշեց համամարդկային գաղափարներ, արտացոլեց ժողովրդի լուսավոր ձգտումների ու արյունոտ իրականության դրաման և մարդկայնորեն գեղեցիկը՝ ազատագրական ոգորումների մեջ։

Իր ինքնատիպությամբ և ուժով նրանց մեջ առաջնակարգ տեղ ունի Դ. Վարուժանը։ Նա բանաստեղծական վիթխարի երևույթ է, բազմազան և խոր. մրրկահույզ և անպարփակ։ Նա իրավունք ուներ ասելու՝ իր էության մեջ զգում է մի ժողովուրդ, որ կրծքի տակ «կը տրոփե»։ Նրա քերթվածներում, իրոք, խտանում է ժողովրդի ողբերգությունը և մաքառման ուժը։ Գոյատևման այդ մեծ ուժով է պայմանավորված քերթողի լավատեսությունը։

Վարուժանը կրակոտ տաղանդ է։ Իր քերթվածներից մեկի մասին Ա. Զոպանյանին ուղղված նամակում գրել է. «Քերթվածը զոր կը ներփակեմ՝ թերևս դուք սիրեք. հակառակ պարագային՝ կարող եք այրել. իր բոցը՝ ապահով եմ՝ երեք օր փարիզը պիտի լուսավորե»¹։ Եվ իրոք, բանաստեղծի յուրաքանչյուր տողը ստեղծվում է ներքին կրակով, կամ ինչպես ինքն է ասել՝ «ամեն շնչտե պետք է որ սիրտը կաթիլ մ'արյուն հոսե»²։ Նրա բանաստեղծական հուժկու պոռթկումները մեծ պաթոսի և կրքերի աշղյունք են։ Ողբանվագ հնչյունը բնությունը չէ նրա պոեզիային։ Ժողովրդի տառապանքը նրա քնարի վրա բեկվում է առնական, հզոր շնչտերով։

¹ ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության գրականութ. և արվեստի թանգարան, Ա. Զոպանյանի արխիվ. 4/4/1907-ի գրած նամակը Գանդից։

² Նույն տեղում, Դ. Վարուժանի նամակները Ա. Զոպանյանին, 21, 1908։

Վարուժանն անցել է դրական որոնումների, անընդհատ վերելքի բարդ ճանապարհ: Նա հանդես է եկել իրրև նորարար, հայտնադործելով նոր թեմաներ և բանաստեղծական ձևեր: Օգտագործելով ուժանտիզմի և ռեալիզմի նվաճումները, ստեղծել է արտահայտչական բազմազան միջոցների անսպառ հարստություն:

Անժատաղանդ քերթողը խոր արմատներով կապված էր ժողովրդի և նրա բազմադարյան դրականության հետ: Ժողովրդայնությամբ տոգորված նրա պոեզիայի բովանդակությունը պայմանավորված է այն ճակատադրական իրադարձություններով, որ ընդգրկում են հայկական ջարդերից մինչև առաջին համաշխարհային պատերազմը: Դա գրական խիզախումների մի շրջան էր, որ դեղարվեստորեն խտացնում էր ելք որոնող հայ ժողովրդի մաքառման փիլիսոփայությունը և ուժը:

~

Դանիել Վարուժանի կյանքը կարճատև եղավ (1884—1915): Արևմտահայ գրական մշակութային սերունդը սեփական արյունով մարեց իր «հույսի ջահերը», որոնք պիտի վառվեին նոր գործերում: Այդ սիրնդից շատերն ընկան, կարելի է ասել, իրենց արվեստանոցի մարմարյա բեկորների մոտ՝ տեսնելով «մորթված Արշալույսներ»: Անավարտ մնացին գեղեցիկ մտահղացումներ, սքանչելի երազներ: Անավարտ մնացին Սիամանթոյի «Եղերամայր»-ը, «Մտածումի և կյանքի տաճարները», Կոմիտասի ստեղծագործական նոր մտահղացումները, Վարուժանի «Հայ հոմերագիրքը», «Գինիի երգերը» և այլն: Տեղի էր ունեցել հետադարձ պատմական շարժում՝ բարբարոսության հաղթանակը կամ, բանաստեղծի խոսքերով՝ կործանումն այն ամենի, «ինչ որ հանճարն է կանգնել»:

Սուլթանական այգ բիրտ ուժի դեմ էր ծառացել արևմտահայ պոեզիան հատկապես XX դարի սկզբներին: Պա արևմտահայ ժողովրդական զանգվածների մաքառման, վերջին ճիգերի, «ազատության կամ մահի» գրական արձագանքն էր: Այդ էր պատճառը, որ շնայած սեղմ ժամանակամիջոցին, դարասկզբի հայ պոեզիան դրսևորեց զարմանալի կենսական ուժ, թողնելով գրական հարուստ ժառանգություն: Դրա ցայտուն օրինակներից է Վարուժանի պոեզիան: «Սարսուռներ»-ից մինչև «Ցեռին սիրտը» և «Հեթանոս երգեր»-ից մինչև «Հացին երգը»,—ընդամենը մեկ տասնամյակում նա անցավ ստեղծագործական փառավոր ուղի:

Վարուժանի մուտքը գրականության մեջ «մրրկային էր իր արվեստի պես»: Նա ասպարեզ իջավ մի այնպիսի ժամանակ, երբ բաղմունքի խրոհիրների առաջ էր կանգնել ոչ միայն հայ գրականությունը, այլև հայ ժողովրդի պատմական զարգացումը: Արևմտահայերի նկատմամբ տարվող բնաջնջման քաղաքականության հետ, որ յրենքի ձև էր ստացել 1895—96-ից հետո, ազգային մշակույթի, մամուլի և գրականության վրա ծանրացել էր համիդյան ռեակցիան: Ինչպես ասում է Վարուժանը, «նույն ահեղ օրերուն հայ բանաստեղծական գրականությունը նախանձելի ոչինչ ուներ... Կային նորերը, ոչ միշտ անտաղանդ, բայց կրած բոնուկալության թաթին տակ, կերգեին միայն կինը...»³:

3 «Գրական ասուլիսներ», Յարճանյանի քերթողությունը, Կ. Պոլիս, 1913, էջ 24—25:

Վարուժանը, իր գրական սերնդի հետ միասին, եկավ վերջ դնելու հոգու և մտքի խեղճությանը պոեզիայում: Նա եկավ բուն գավառից, նետվեց եվրոպական մշակույթի ոստանները, բայց մինչև իսկ խաչածև ազդեցությունների մեջ անեղծ պահեց իր աշխարհը՝ ժողովրդական կյանքը՝ ցավատանջ հարցերով, մարդկայնությամբ, լուսածածան երազներով և բնաշխարհիկ դեղեցկություններով:

Բանաստեղծի գրական առաջին իսկ փորձերից երևում է նրա սերտ կապը հայրենի աշխարհի հետ: Դեռ 1901-ին Կ. Պոլսի Մխիթարյան վարժարանում Պ. Դուրյանի և Մ. Պեշիկթաշլյանի ազդեցության ներքո գրած ոտանավորներում, որոնց մի մասը լույս է ընծայված դպրոցի «Արձագանք մոտայի» խմորատիպ թերթում, հնչում է բնաշխարհիկ կարոտը: Այդ մոտիվի շարունակությունն է 1902-ին գրված «Մաղկկությունը կամ Բրդնիկցիի մր նվագները» խորագիրը կրող նորահայտ բանաստեղծաշարը⁴: «Մոտայեն ներշնչված... տխուր և զվարթ, ժպիտով և արցունքով»⁵ նա ասպարեզ է բերում «Դափնեվարդ»-ի, «Շուշան»-ի, «Նարգիս»-ի, «Հասմիկ»-ի, «Մեխակ»-ի, «Կուսածաղիկ»-ի, «Մանուշակ»-ի և դաշտի գեղեցիկ ու հմայիչ այլ ծաղիկների և պատանեկան սիրուհիների: Ուշագրավ է, որ տակավին «թերավարժ» այս երգերը և հեղինակի ամենահասուն շրջանի «Հասցին երգ»-ը կապված են նույն բնաշխարհի, գյուղական նույն պարզ ու երսիկոտ միջավայրի հետ:

Ամոթխած լուսնին
Աղվոր դեմքին պես
Եվ ոսկի զուլեով
Փայլիս ու բուրեւ:

Երբ էի մանուկ
Տենչայի ֆանի
Ժողվել, հուրիենլ
Քեզ փունջ առփենի...:

Բրդերեկունին ալ
Խաղաճով զրվարբ
Եր ֆաղե բզմեզ
Դրենլ կուրծքին զարդ:

Ուր ժայռիս՝ աճուր
Աչքերուն տակ վես՝
Որոճե՛ սիգալով
Ընդ կր դիտեն ճեզ:

Եր բուրեւ մեղմիկ՝
Լաճեքին վրա մարմար,
Ուր սիրո հույզեր
Քեզ կօրոճեն ճար:

Կույս սուրտի մ'աճմնո՛
Այդ հույզերն ամեն,
Աչքն մ'առնական
Խուսափուկ խոռով են:

I

(սենձոր ծաղիկ)

Վենետիկի Ս. Ղազար կղզում լույս ընծայված Վարուժանի թերթվածների առաջին գրքույկը՝ «Սարսուռներ»-ը (1905-ին «Գեղունի»-ում և 1906-ին առանձնատիպ), շնայած Մխիթարյանների մկրատի ավերմունքին, ջերմությանը ընդունվեց: Հեղինակը գրում է, թե «կեսեն ավելին—կրնամ բսել լավ մասը — շհրաւարակվեցավ»⁶: Նորերս ստացված արխիվից ստուգվում է, որ

⁴ Մինչև այժմ անհայտ բանաստեղծությունների այս տետրը, «Սարսուռներ»-ի և հեղինակի ձեռագիր այլ նյութերի հետ, Վարուժանի ղուտոր Վերոնիկի կողմից վերջերս ուղարկվել է ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան:

⁵ Նույն տեղում, հեղինակի խոսքից, որն ուղղված է Հ. Ա. Ք.-ին (մեր կարծիքով իր հայոց լեզվի ուսուցիչ հայր Արիստակես Փասկանդիյանին):

⁶ ԳԱԹ, Ա. Չոպանյանի արխիվ, 1906, փետրվարի 26-ին Գանդից գրած Վարուժանի ձեռագիր:

«Սարսուռներ»-ի բնագրից մկրատով իրոք կտրված է թերթերի մոտ կեսը: Մխիթարյանները աշխատել են թույլ շտալ «թուրրին դեմ հակառակ րսւն մը»⁷: Նույն նպատակով խմբագիրները «Բազմավեպ»-ում լույս տեսնող Վարուժանի հայրենասիրական բանաստեղծություններից ջնջում էին Արևմտյան Հայաստանի քաղաքական ծանր վիճակը պատկերող տողերը: Այսպիսով, հենց սկզբից պարզվում է հեղինակի դավանանքը:

«Սարսուռներ»-ում, հալթահարելով իր խառնվածքին խորթ ազդեցությունները դատողականությունը, բարոյախոսական հորդորները և այլն, Վարուժանն անցնում է դեպի հասարակական կյանքի ցավատանջ խնդիրները, ստեղծելով դասական հստակության և գեղեցկության հասնող պատկերներ («Հիվանդ», «Ավազանի ձուկերուն», «Հայր, օրհնե» և այլն): Այստեղ, հենց սկզբից, ձգտում է հարադատ մնալ Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Մ. Պեշիկթաշյանի, Պ. Դուրյանի, Բաֆթու լավագույն ավանդներին, որոնց երկերով հափրշտակվել է աշակերտական տարիներից ի վեր: Հեղինակը իր առաջ խնդիր է դնում ծառայել ժողովրդին, պատկերել Արևմտյան Հայաստանի ծանր իրականությունը և աշխարհի ոտնահարված մարդկության վիճակը: Ըր քնարը նաև կոչում է ժողովրդի «վերքերու գործի մը», որով մեծ նախորդների նման նետվում է պայքարի ասպարեղ:

Ժողովրդի՝ն ոլլալ կ'ուզես՝ մօ՛րո չեղած:

Ծնողիդ սուցումը քու դարձիդ կը սպասե:

Արևմուտի մե՛ծ ծաղիկներդ բսծուղած

Պիտի խորշակն Արևելի ազատ:

(«Մուսայիկ»):

Ժողովրդին նվիրվելու այս դավանանքը գեղարվեստական հուժկու արտահայտություն ստացավ «Յեղին սիրտը» թերթվածների ժողովածուում (1909, 4. Պոլիս): Երբքը յասպարեզ եկավ թուրքական սահմանադրության օրերին, երբ նկատելի աշխուժություն էր սկսվել ազգային կյանքում: Տարասփյուռ հայ մտավորականության հետ արտասահմանից վերադարձել էր նաև Վարուժանը, ծավալվել էր գրական-մշակութային լայն գործունեություն: «Ծթե անկողմնակալ ոգիով քննենք այն, ինչ որ իրականացավ 5—6 տարիներու ընթացքին թուրքահայ կյանքին՝ մեջ, առանց վարանելու կարելի է հրաշք նկատել» — գրում է Ջ. Ծսայանը⁸:

Այդ շրջանում հայտնի դարձան Սիամանթոյի և Վարուժանի անունները, որոնց երկերը մինչ սահմանադրությունը դժվարությամբ էին թափանցում Թուրքիա: Դրանց հետ Մ. Մեծարենցի և, արևելահայ հատվածում, Վ. Տերյանի գործերը գալիս էին խոր բեկում ստեղծելու դարասկզբի հայ պոեզիայում:

Նրանք հանդես եկան պատմական մի շրջանում, երբ զգալի տեղաշարժ էր կատարվել հասարակական ըմբռնումների, հատկապես նոր սերնդի մտավորականության մեջ, որ հիմնականում քաղաքիներ էր: Քաղաքի մայթերը մաշող կամ հրաշալի, լուսածածան գիշերների կարոտ հերոսի խուսափուկ հույ-

⁷ Դ. Զիգմենյան, Դանիել Վարուժան, Իհիթ, 1955, 1907 թ. փետրվ. 27-ին Գանդից գրած նամակը:

⁸ «Գրական երեկոներ», դասախոսություն Ջ. Ծսայանի, Թիֆլիս, 1916, էջ 36:

ղերը, լծի դեմ ծառացող ռազմիրաները, սոցիալական շարժումը և այլն՝ պահանջում էին արտահայտչական նոր միջոցներ:

Մեծարենցը և Տերյանը հայ պոեզիան հարստացրին անսահման նրբությամբ և հնչեղությամբ, երանդներով, ակուն ձևերով, հոգեկան թեթուշ, անբմրունների ապրումներ զրահորելու հնարքներով: Սիամանթոն բերում էր երևակայության անսահման թռչիւրներ, աղատ և կրքոտ ձևեր, դուլների անսովոր թարմություն, սկարծես հրաշեկ երկաթով մարմարիոնի վրա պատկերներ» զրոշմելով:

Իր քերթվածների նոր զրբում Վարուժանը ժողովրդական լեզվի և զրարարի խորագիտակ օգտագործումով նոր, կենսունակ ձևեր, համարձակ, վարթամ, ճկուն դարձվածքներ, հղոր, առնական, մրրկաշունչ շեշտեր էր բերում հայ պոեզիա: Դա ժամանակի ձայնն էր, որ խոսում էր ժողովրդի ցավերից, «սուղ ու արյունի», հերոսական զրվագների, արժանապատվության և աղատագրական պայքարի մասին: Բանաստեղծը կարծես սերում էր մեր անցյալի հսկաներից կամ, ինչպես ասել է Ֆրանսիացի բանաստեղծ Լյուր Անդրե Մարսելը, «պատկանում էր առյուծի ցեղին»: Նրա ձայնը հնչում էր մեր տոհմիկ երգի եղեգնափողից՝ մեքթ ծուխ, մերթ բոց ժայթքելով: Գրական հորիզոնում հեղինակի երևալը այդ հայրենասիրական երգերով, ժամանակակիցներից մեկը նմանեցրել է ծագող արեին: Բրոք, նա ստեղծեց հիացմունքի մթնոլորտ և խոր հետք թողեց ժամանակի զրական շարժման վրա. «Գուրյանեն վերջը,— զրում է Մերուժան Պարսամյանը, —Վարուժանն է, որ բազմաթիվ հետևորդներ ունեցած է: Վարուժանություն մը գոյություն ունի այսօր»:

«Ցեղին սիրտը» ժողովածուի առաջին մասում («Բագինին վրա») հեղինակը զլխավորապես ժողովրդի տառապանքն է նկարագրում, արևմտահայ եղեռնալի իրականության և ուժանտիկ երազանքների դրաման: Հնազույն մշակույթի մի ժողովրդի անհետացման վտանգը, ապրելու և տևելու կամքը, լավատեսությունը, բարոյական ուժն ու վեհությունը քչերին հաջողվեց երգել այնպես հուժկու և մարդասիրական պաթոսով, ինչպես Վարուժանին և Սիամանթոնին:

Տառապանքի, վրեժի, երգիծանքի այրող զգացմունքով են շաղախված ?895—96-ի, 1904-ի, 1909-ի ցարդերի պատկերները, ուր մերկացվում է արևմրտանվրոպական մեծ տերությունների կեղծ մարդասիրությունը և թուրքական դահիճների ահուկի եղեռնագործությունները, նրանց ավերիչ ոգին:

Խանձումն ու հոտը մարմնի
Խեր սեմերեն, օրոցճներեն
Գեպի վեր.
Դեպի երկին՝ կը նեններեն՝
որոնց դեմ
Իրենց պիճներ բացած՝
Ալլահն ամպին միշե. Սուլթանը
ցեխին
Հոտոտելով փոխն ի փոխ՝
Կը ժողտին հայտ իօտուտ,
Աւ եվրոպան պեմն իւ
Լուս դարձուցած
Կոպեր բաց կը շփե —
Խեր ծուխն ալլէ իւ բողի
Կրսկնելուն համար լոկ:
(«Զարդը»):

Ջարդերի իրականությունն: ռաւաւցուղ Վարուժանի, ինչպես և Սիւմանթոյի, քերթվածները վշտի և մաքառման: Երգեր են, ցավի և ցասման, հեծեւանքի և վրեժի, բոցավառ սիրո և հրեղէն ատելութեան որոտմունք: Եթէ վերջինիս պոեզիայում գերիշխում է ոռմանտիկական հիպերբոլան, այլաբանութիւնը, ջարդերի տեսիլքներն ընդհանրապէս, գալիքի «լինել չլինելու» վտանգի կանխագուշակումներով, ապա Վարուժանը գրեթէ միշտ որոշակի երևույթն է տեսնում, իր սյուժետային մանրամասներով, ընթացքով...

Վարուժանի և Սիւմանթոյի ոռմանտիզմը, խստորոշ առանձնահատկութիւններով հանդերձ, մոտենում են՝ արվեստում ազգային սկզբունքի պաշտպանութեամբ, սուլթանիզմի և սմէն տեսակի ճնշման, ինչպէս և օտարի լուծը հանդուրժող կղերական խղճուկ մտայնութեան դեմ ուղղված մարտական պայքարով, հերոսականութեամբ, ազատագրական պայքարի մեկնակետից ներկայի և անցյալի քննադատութեամբ և այլն:

Ազգային ողբերգութիւնը Վարուժանի պոեզիայում համապարփակ զգացմունք չէ, քանի որ զարգանում է ներքին պայքարով, ֆիզիկական պարտութեանը հակադրվող բարոյական-գաղափարական հաղթանակի սկզբունքով: Մի շարք քերթվածներում, ուր ծայրաստիճան էֆեկտիվութեամբ զարգանում են ոռմանտիկ սիմվոլիկական և այլաբանութիւնը, առաջ է քաշվում թշնամուն բարոյապէս ջախջախելու պրոբլեմը, մի տեսակ հաստատելով Հյուգոյի այն միտքը, թէ մարդկային հոգին ներկայումս ավելի շատ իղեալի, քան սեռականութեան կարիքը ունի («Ջարդը», «Օձը», «Մեր կռուները», «Վիրավոր», «Արմենուհին» և այլն): Վարուժանի պոեզիան տոգորված է բարոյական այն մեծ ուժով, որ հերոսին մղում է ապրել ու մեռնել արեւի պէս, արհամարհելով թշնամուն:

Բայց վիրավոր մ'ավասիկ կը կորուզվի մութին մէջ.

Հետո ծունկի վրա բնդաւոր կը մոտենա խուճանին.

Եվ հեզնորէն. Բո՛ւ ալիւր աշունտողիւ կը իմնէ

Խաւովիս մե՛ տօնակուն:

(«Կիլիկյան մոխիրներուն»):

Ջարդերը և նրա տխուր հետեանքները պատկերող դործերում բանաստեղծը ոչ միայն ողբում է, այլև դատապարտում, անարգանքի սյունին է գամում «դահճապետներին» և «մոռնչունով պոռթկում» աշխարհի առաջ պաշտպանելով հայ ժողովրդի դատը: Բանաստեղծական ահագնացող ուժով նա զարգացնում է հայ ժողովրդի անմահութեան, պայքարի, թշնամու անխուսափելի պարտութեան և բարոյական ոշնացման գաղափարը:

Այսպիսով, ազգային ողբերգութիւնը զարգանում է հերոսութեան ոգով, ծանր դրաման լուծվում է քրիստոնէական համակերպութիւնը ժխտելու, ընդվզելու, «ժանիքի դեմ ժանիքը» հաստատելու սկզբունքով: Այստեղ բանաստեղծի երգը, ինչպէս ինքն է ասում, չափվում է «կայծակներու շեշտերով», դառնում առյուծի մոնշչուն, ապստամբութեան դրոշ: Եղեգնափողի դողտրիկ պատկերով, ուր բանաստեղծը բյուրեղային հստակութեամբ ցույց է տալիս հայ պետականութեան անկման դարերից սկսած մեր տոհմիկ երգի թախիժով հաղենալը, սրում է ազատագրական պայքարի պրոբլեմը: Միայն պայքարը կարող է մեր երգին ծուխի և ողբի վոխարեն կրկին վաղնջական լույսը և բոցը վերընծայել:

Ու պայքար, պայքար, սաւառ երգեցի.
 — Ձեզի բնծա, ՀԱՅ ՄԱՐՏԻՎՈՒՆՐ —
 Գրիչս եղավ անբոց սրտեւոյ հսոցի...
 — Ձեզի բնծա, ՔԱՋ ՄԱՐՏԻՎՈՒՆՐ —
 Եղեզնյա զրոյով վրեժ երկեցի.
 Ընտ եղեզան փող բոց ելանաւ

Ժողովրդական ակունքներին մոտենալու այս ձգտումը բանաստեղծական խոսքը հասցրել է վերջնական բյուրեղացման: Հայրենի եզերքի կարոտով շնչող մի շարք երգերում նկարվում են մեր լեռնաշխարհի, ապստամբ հովվի, ավերված օջախի, պանդուխտին սպասող ծերացած մոր, տառապանքի և հույսի պատկերները՝ կոլտրիտային երանգների հարաճուն զեղեցկությամբ («Հայրենի լեռներ», «Հովիվը», «Կարոտի նամակ»):

Վարուժանի ստեղծագործական նոր, առավել խիզախ թռիչքը «Հեթանոս երգեր»-ն էր, որ լույս ընծայվեց 1912-ին, Կ. Պոլսում: Այստեղ հեղինակը անսովոր ձևերի մեջ առաջ է քաշում արդիական հարցեր, բերելով նորի զգացումը, կենսական նոր նյութի և տրված լիարժեք միջոցների հայտնագործություն: Նա պոեզիայի զարգացման ուղիներ էր նշում, բախվում գեղագիտական հին ակզորներին, հեղաշրջում նախկին ըմբռնումներն ու շափանիչները, ստեղծում իր հետևորդները: Եվ բնական է, որ զիրքը առաջ պիտի բերեր բուռն հետաքրքրություն և տարիներ շատող բանակույզներ: Նորի առավել սուր զգացումը Վարուժանի պոեզիայում ստեղծվում է երկու միջավայրի ազդեցությամբ՝ հայկականի և եվրոպականի՝ «Վենետիկը իր Թիցիանոյով, և Ֆլանտրը իր Վան-Տիգենրով: Առաջինին դույները և վերջնույն բարբառոս իրապաշտությունը հորինած են վրձինս՝ զոր սնափառություն ունիմ թաթխած ըլլալու միմիայն հայրենի հողին որդան կարմրին մեջ և ծովածուփ արյանը» — վկայում է բանաստեղծը իր մասին¹⁰:

Բանաստեղծական նոր ձևերը ջայտուն են արտահայտում քերթողի հակակրանքը այն ամենի հանդեպ, ինչ խորթ է բնաշխարհիկ պոեզիային, ինչ օտար է հայ ժողովրդական բարոյականությանը, ազգային ոգուն: Անբարոյականության և ցուփության մեջ խրված եվրոպական քաղաքի մերկացումը, քերթության եռանդազին, ազատ, էֆեկտիվ ձևերը, որոնք թանձրորեն պատկերում են անկում ապրող բուրժուական հասարակությունը և նրա երեսն ի վար քրքջացող պոռնիկին, բխում են հենց այդ հակակրանքի կրքոտությունից:

Իհնի, ուսին ու արփանք
 Քաղաքին վրա, կո պսածեցվին տավիղով.
 Քաղաքին վրա, ու նքստած
 Ախր ծովուն, ցահաւազադ լսդի պես
 Կո պրենե ծոցն իւ՝ անեւով անհամար:

Եվրոպական քաղաքի այլանդակ լարերից, ինչպես բանաստեղծն է ասում, հեթանոս դարերի սիրոյ տառված էրոսը փախչում է՝ տատրակի պես

¹⁰ «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1909, էջ 79:

անմեղորեն ամաչելով: Դատապարտելով անառակության ոստանները, «Հեթանոս երգեր»-ում Վարուժանը ստեղծում է ժողովրդայնության ոգով տոգորված, պարզ ու բնական մարդկային հարաբերությունների աշխարհը, պայմանականորեն կապելով այն հեթանոսական կամ ասպետական անցյալի հետ: Կյանքի մեծ սիրով լի այդ աշխարհը առանձնանում է գեղեցիկ մարմնի և գեղեցիկ հոգու ներդաշնակությամբ, լազատասիրությամբ, անկեղծությամբ և բարոյական այլ սքանչելի գծերով: Հելլենական քանդակները հիշեցնող կանացի մերկության, սիրո և գեղեցկության պոեզիայում, որ նույնպես ֆիզիկական և բարոյական այլասերման հակադրությունն է, մարմնավորվում է վսեմի և իդեալականի գաղափարը: Գեղեցկության այդ քանդակները երազված կյանքի ժպիտն են՝ ցավագար իրականության հանդեպ: Այդ պատկերներով միանգամայն նոր ձև է ստանում սիրո ողմանտիկան, մեր պոեզիայում հայտնի «անուրջ կույսի» կամ «ցնորք ալջկա» երգը: Վարուժանը այլ կերպ է դրսևորում իր պաշտամունքը անբասիր կնոջ, բարձրի, վսեմի ու գեղեցիկի հանդեպ, որ անցյալի «միաշյա» քննադատներին թվացել է «պժգալի և անառակ»:

Մերկ բլլաս դու բանաստեղծի մ'նոգույն պես,

Իվ հերանոս այն մերկայայանդ ներքև

Տառապի մարդն, ու լրկունս ոհա: Իմ քեզ:

Ծավալուն բանավեճերի առիթ տված այս գեղագիտական սկզբունքի չափսուն արտահայտությունն է «Հարձ»-ը, որ մեծ կրքերի ու զգացմունքների դրսևորման ուժգնությամբ և հումանիստական բովանդակությամբ հայ և, կարելի է ասել, համաշխարհային պոեզիայի գոհարներից է:

Մ. Խորենացու հաղորդած պատմական ավանդությունը, որ ընկած է էպիկական շնչով կերտված պոեմի հիմքում, լուսաբանվել է ոչ թե պատմության, այլ արդիական, կենսական հարցերի, XX դարի հասարակական բարքերի անկումը բացահայտելու համար: Այստեղ մարդկայնության իդեալը, իսկական սերը, հերոսականությունը և այլն՝ հակադրվում են այլասերված բարքերին, նենգությանը, սիրո վաճառքին: Քերթույր վերստեղծում է «գեղեցկության և շորության» հմայքով լի այն աշխարհը, որ մարդիկ անկեղծ են և հղոր «նման գինիի», սերը՝ հավերժական: Սխալ այն կարծիքը, թե Վարուժանը տեսնում է իր հերոսների միայն արտաքին գեղեցկությունը, հերքվում է հենց «Հարձ»-ի հերոսների օրինակով: Տրդատը զգացմունքից զուրկ մի գոհիկ հափշտակիչ չէ պոեմում, այլ նազենիկի աղատարարը, որ նրա կյանքի խավարում հայտնվում է բաղվող արշալույսի խորհրդապատկերով: Ապառաժ տղամարդ լինելով, նա հոգեկան տառապանքից արտասվում է, երբ իրեն ապավինած կնոջը, առեղծվածային գեղեցկությունն ու սերը կործանումից փրկելու նրա գերհղոր ջանքերն ապարդյուն են անցնում: Նազենիկի գեղաքանդակ ձևերը, մրրկաշունչ պարը՝ «դաշնակության ու գեղի», հավերժ կանացի գեղեցկության և սիրո փառսրանություն են, քաղաքի «դիմակներ շաղվող կանանց» հակաբեկուր: Նրա հայացքը «ուր կրնկողմի մարդ հեշտին, բայց դուրս կ'ելլե վիրավոր» և «սուսնձակոտոր» պարը հոգեկան գեղեցկության, պոեմի աղատասիրական գաղափարի մարմնացումն է: Նազենիկը պարում է ոչ թե իբրև հարձ՝ տիրոջ թելադրանքով, այլ՝ Տրդատի սիրո մղումով, դրա համար էլ այդ պարը, որ քերթության սքանչելիք է, ողմանտիկորեն հրաշագործված ու վեհացված է:

Ան կը նախընտրէ՝ կը նախընտրէ՝ կատաղութեամբ կը նախընտրէ՝
 Երբոր ետեւ կը ընկնի՝ կուրծքին վրա հոյաշէն
 Բոլորի տես կը դիզվի ըստիւններէն հը սարսուռովն.
 Եւ վարսերէն իր վիժանուտ, ուսերէն ի վար հոսելով.
 Կերքան փրփրիլ նատակիւն, ոտն կազմելով ոսկի ծով.
 Ան կը նախընտրէ՝ կը նախընտրէ՝ սանձակոտոր կը սախընտրէ...
 Հոգույն մեջ՝ ծով, շուրջը՝ լուս, ա՛ն Կիպերյան Աստղիկն է՝
 Որ իր շորս կողմէն հավաքած աղափնիները տուսել
 Փութեմ կ'ընէ ըրեղելու ինքն ալ անոնց հետ մեկտեղ...

Համբարձմանը ստրկական կյանքի դնմ, ազատության մեջ սիրո նվիրա-
 բերությունն առյուծենքու քաջության, և ոչ ոսկի հորթերուն», հավերժական,
 անկեղծ սեր և այլն՝ հոգեկան այս բարձր արժանիքներով են բնորոշվում
 «Հարճ»-ի հերոսները:

Հեթանոս անցյալի, ինչպիսի և հին աստվածների պատկերներով Վարու-
 ժանը մի կողմից բնական, պարզ կյանքի, «հորը և անկեղծ» մարդու փառա-
 բանությունն է անում, ողբում դրանց կործանումը, մյուս կողմից այդ ամենը
 հակադրում է XX դարի բուրժուական հասարակությանը, մանավանդ քրիս-
 տոնական կրոնին և ժողովրդի ստրկացմանը: Բանաստեղծը անցյալի մեջ,
 նահապետական կյանքում տեսնում է մարդու ազատությունը՝ պաշտպանող
 շատ զեղեցիկ կողմեր, որ մերժվել, մոռացվել են նոր ժամանակներում:

Լուկ կը տեսնեմ Ավանդությունն՝ որ կուլա
 Նստած կոնգի մը վրա:

(«Մեռած Աստվ. ծներուն»):

«Արյունափառ խաչը» թուլացրել է մաքառման ոգին՝ «մի կալ հակառակ
 չարին» պատգամը թողնելով մարդկությանը: Եթե հեթանոս աստվածները
 բերում են լուսափայլ, հմայիչ բնությունը, արևի տակ պոռթկացող կյանքը,
 ապա մարդկային տառապանքի հանդեպ անտարբեր՝ «խուլ Աստծո» զարշա-
 պարի տակ՝ կյանքը դուրս է սալթաքում շավղից, մարդկային առողջ, զեղե-
 ցիկ և հզոր բնությունը դառնում շեշին և ողորմելի՝ հող ստեղծելով բոնության
 և այլասերման համար:

Բնական կյանքով ապրելու, բնությանը մոտ և հարազատ մնալու, կյան-
 քի «ուժն ու զեղը» անբասիր ձևերի մեջ գտնելու սկզբունքը, որ հավերժորեն
 ապրում է ժողովրդի մեջ, իր արտահայտությունն է ստացել նաև Վարուժանի
 քնարական փոքրածավալ երգերում: Այստեղ սիրո անուրջներն ու ցնորքները
 ամբողջովին հյուսված են բնության վառ գույներին՝ ծաղկալի դաշտ, գալար
 կղզի, կանաչ բլուր ու ձոր, և այլն: Այստեղ շկան աշնան, ձմեռվա և գիշերվա
 տխուր գույները: Այս երանգապանակի պայծառությունը պայմանավորված է
 ծաղկող բնության, սիրո երգերի այն ուրախ բովանդակությամբ, որ քերթողը
 հալ զրականություն է բերում մերժված սիրո ցավագին, լալկան երգերի փո-
 խարեն:

Ժպիտենքով աշիւրը լի. վիքի պես,
 Ան ներս մրտավ իմ շեմես:
 Տեակբս բույրով լեզվեկավ:

(«Դրդանք»):

Ժողովրդական ակունքներին, բանավեճի պոետիկական միջոցներին մոտենալու ձգտումը Վարուժանի պոեզիայում ուժեղանում է ինչպես վերջին տարիների ստեղծագործությունների, այնպես էլ սիրո երգերի մեջ: Տպագիր և անտիպ այդ երգերից նույնիսկ մտադրություն է եղել կազմել առանձին հատոր՝ «Կնոջս Ալպումը» խորագրով¹⁾ Այդ երգերից են «Գուշակը», «Հմայքի աղբյուրը», «Նավասարդյան»-ը և այլն:

«Հեթանոս երգեր»-ը ժողովրդական կենսասիրությամբ, կյանքի պայծառ, շենշող գույներով և մարդկայնությամբ հակադրվում են վհատ, թույլ հոգիներին:

«Գողգոթայի ծաղիկներ» խորագիրը կրող շարքում բացվում են կյանքի ողբերգական էջերը, որոնց միջից անցնում է «մահվան ճիվաղը»: Սոցիալական անհավասարության, կարիքի աշխարհը թեպետև նորություն չէ մեր գրականության համար, սակայն այստեղ այն հանդես է գալիս ժամանակի և միջավայրի նոր կողմերով. կարիքից ակամա վաճառքի հանվող կնոջ, սիրո, «ապօրինի զավակի մոր», աշխատավորուհու տնտեսական և բարոյական քայքայման ողբերգությունը և, առավելապես, բանվոր դասակարգի կյանքի, աշխատանքի և պայքարի երգերի շարքը առանձնանում են ռեալիստական խոր պարզությամբ, մեծ կրքերով ու գաղափարներով:

Վարուժանը, առաջին անգամ արևմտահայ պոեզիա բերելով պրոլետարիատի կյանքի ու պայքարի երգերը, Բանձր և ճշմարտացի նկարագրությամբ մեր առաջ բացում է մի նոր աշխարհ, «գեհեն գործարանում» անմարդկային շահագործումից հյուծախտավոր, քաղցից մեռնող, տանջահար բանվորական աշխարհը: Երանգապանակի մոռյլ գույները՝ «գեհենամուկ զործարանը», «վիշապ հնոցը», «հրեշ մեքենաները» և այլն, կոչված են դատապարտելու ոչ թե մեքենան, ինչպես երբեմն պնդել են քննադատության մեջ, այլ կապիտալիստական շահագործումը, տիրող կարգերը: Այդ իմաստով էլ նրանք ռեալիստական բովանդակություն ունեն:

Ռոմանտիկական և ռեալիստական սկզբունքների մերձեցումը, որ Վարուժանի ոճի բնորոշ հատկանիշն է, այստեղ առավել ակնբախ է դառնում: Մոռյլ և լուսավոր, հրաշապատում և իրապատում դույնների մեծարվեստ զուգորդությամբ նա քանդակում է պրոլետարական զանգվածների անսահման թշվառությունը և դրան հակադրվող ամբոխների ահռելի ուժը, պոռթկացող ամպրոպի կանխազգացումը: Մի կողմից՝ «բանականները կմախք», «պատառոտուն շապիկներ» և այլն, մյուս կողմից՝ «գլուխները տիտան», «բրբերը հրձիգ» և սրտեր, որոնք «հզոր կը տրոփեն»։ մի կողմից՝ «Ոսկյա հորթին առջև մորթվելու» բանականներ, մյուս կողմից՝ «սարսափն այդ ահեղ բանականներուն»:

Իրենց հոգեմանք կառնես խուլ զայրույթով կը փռեն
Դղակներու հիմունքներն, ու ուսլաւկներն օրձաբե:

Սովատանջ բանականների այդ մեծ ուժը, ամեն ինչ քանդող, ավերող ուժ չէ միայն, ինչպես արտահայտվել է քննադատության մեջ: Թեպետև տարերային, բայց նրա շարժումը աննպատակ չէ, այլ ձգտում է աշխարհի վերա-

1) Այդ քերթվածները պահպանվել են Վարուժանի այրիի՝ տիկին Արաքսի-Վարուժանի մոտ և վերջինիս մահից հետո բանաստեղծի դուստր Վերոնիկի կողմից արխիվի հետ ուղարկվել են ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան:

փոխմանը՝ բերելու համար մարդկության հուսադեղ առավոտը: Այդ ուժը
կանգնեցրել է բուրգեր, արքայների գահեր, հերկել է հողը և այլն:

Եվ մեռ դարուն հաղորդյուն Կամարն այսօր ևս հանգի:
Հարյուր հազար բանվորի ուսերուն վրա արհիհի:

«Հեթանոս երգեր»-ը մաքառման փիլիսոփայությամբ կապվում է «Յեղին
սիրտը» գրքի հետ: Մակայն այստեղ ղեղարվեստական միանգամայն նոր թե-
մայով և արվեստի նոր միջոցներով բանաստեղծը զրսևորել է ոչ միայն աղ-
գային-աղատագրության, այլև բնդհանրապես աղատության զաղափարը,
կանգնելով աշխարհի ճնշված մարդկության պրոբլեմի հանդեպ: Այս տեսա-
կետից բնորոշ է, որ դեռևս «Յեղին սիրտը» շարքի սքանչելի քերթվածներից
մեկում («Սեմեսիս») սոցիալական վիթխարի ընդվզման ֆոնի վրա բարձրա-
ցած արդարության և վրեժի աստվածուհու արձանի մոտ խոնվում են սոցիա-
լական և աղգային ճնշման զոհերը, «գործատուներն, թիարանեն, բանտերին»
գրոհող ամբոխների կողքին կանգնում են նաև ջարդերից «այրուծիի տաչ
ճըղմված» հայ մարդիկ:

Բանվորական երգերում մարդկայնորեն զեղեցիկը զրսևորվում է ոչ
միայն տնանկի ու թշվառի, «հանուն պատառ մը հացի» գործատուն մտնողի
հանդեպ ունեցած անսահման կարեկցության, հումանիզմի մեջ, այլև տառա-
պածի, ճնշվածի տիտանական ցասման և պայքարի մեջ: Հեթանոս երգը այս-
տեղ դառնում է հսկաների երգը, որի մեջ լսվում է առնական, մեծ սրտերի
տրոփյունը, բանվորների ոտնաձայնը, հուժկու բազուկների շարժումը:

Որոնք կարմիր պիտ՝ բլլան. ու մը զսնդն՝ դարբենելով:

Այստեղ բանաստեղծի ղեղադրիտական իդեալը կապվում է մաքառման
հետ՝ բանաստեղծական հյուսվածքներին տալով արտասովոր կրակոտություն:
Բոցաշունչ, թևավոր պատկերներում զարգացվում են պրոլետարական զանգ-
վածների ուժի զաղափարը, շարժման առնական ու խրոխտ ութմը, ժողովուրդ-
ների պարթոնքը և պայքարի մոլեգնությունը:

Ժողովուրդներն ավասիկ կը խորտակեն շղթալերն
Եվ անոնցմով տերն իրենց կատաղուրեն կը ծաղկեն:

Վարուժանը հետզհետե ավելի է խորամուխ լինում իր դարաշրջանի
հակընդդեմ ուժերի պայքարում, տարվում դարակազմիկ խոհերով: «Ո՛վ Դար,
ո՛վ Դար...» քերթվածում Ռուսաստանում խմորվող հեղափոխության ազդե-
ցությամբ նա տեսնում է բանվորական շարժման ծավալումը աշխարհով մեկ,
կռահում աշխարհի վերափոխումը, պատմական նոր ուժերի հաղթանակը, որ
«արվագունդի մը նման» պիտի բացի XX դարի ապագան՝ «Մարդկության
Առավոտը» և աշխարհը՝ նորոգված ու զեղեցիկ, պիտի արժանի լինի «Արևին
շուրջ դառնալուն...»:

*
*

Վարուժանի ստեղծագործական կենսունակության հիանալի ասպարեզը
հանդիսացավ «Հացին երգը», որ լույս ընծայվեց հեղինակի մահից հե-
տո՝ 1921-ին, 4. Պոլսում: Այստեղ բանաստեղծը նպատակ չի դրել տալ իր

ապրած շրջանի հայ գյուղի համակողմանի պատկերը, թնայետ, իր ուսուցչության տարիներին մեծ լիցք է ստացել հայրենի աշխարհից: Նրան հիմնականում զբաղեցրել է հայրենի հողի և մարդու ազատության պրոբլեմը: Եթե «Հեթանոս երգեր»-ում քաղաքը և գործարանը, տիրող կարգերի այս խորհրդանիշները, պատկերվում էին մոռյալ գույներով, ապա «Հացին երգ»-ում գյուղի բնակարաններն առնում են ցորենի, կակաչների ու արևի պայծառ գույներ: Մրանով բանաստեղծը հակադրվում է քաղաքի այլասերմանը, բարձրացնելով ազատ, ծաղկուն հայրենիքի, ժողովրդական կյանքի և բարոյականության գեղադրական իդեալը:

«Հացին երգ»-ով Վարուժանը հայ պրականություն է բերել միմյանց հաճորդող դաշտային աշխատանքների ամբողջական երգաշար, որ ամբողջացված է ներքին սերտ կապով: Այս տեսակետից դա մի պոեմաձև ստեղծագործություն է: Պատահական չէ, որ երփնավառ դաշտերի պոեզիայով ներթափանցված այդ երգաշարը սկսվում է բացվող գարնան պատկերներով: Ծաղկող բնության հետ կարծես հայրենիքն էլ է ձերածնվել, ազատվել բռնության կապանքից: Այստեղ ամեն ինչ ողողված է երազելի ազատության և խաղաղության լույսով: Աշխարհն ազատ է ու լայն: Ցորյանի ծովերը տարածվում են հորիզոնից հորիզոն: Արտերին իջել է վսեմ անդորրություն և խնդություն: Դաշտերը հրդեհվել են կակաչների կարմիրով, ամեն ինչ խինդով, ամեն ինչ ոսկի երազներով է լցվել:

Այս երգերի հերոսը իր էությունից հայրենի բնաշխարհի շարունակությունն է՝ բարիքներ ստեղծողը, «բրտինքով մարգարտյա բնության թագուհի» հյուսողը: Նա «դաշտի հզոր պավակն» է, ազատ և ինքնավստահ: Նրա ոտքերի տակ դղրդում է մայր հրկիրը, ժայռ չի խամրիր ծիլ՝ ս'իսկ գարշապարին տակ հսկա»: Նրա հոգին անբասիր է, շիտակ, ինչպես իր գծած ակոսները հողի մեջ: Նա հերկում է երգելով և հերկերը ոռոգվում են ոչ թե իր արյունով, ինչպես դարեր շարունակ, այլ օձերի, որ սպանվել են խոփից:

Բանաստեղծական այս բարձր տրամադրությունն ունի իր պատմական հիմքերը: «Հացին երգը» ստեղծելիս ջարդերի շրջանն անցել է 1913-ին հայկական հարցը նորից առաջ էր քաշվել: Թուսաստանը դրոյ էր Արևմտյան Հայաստանի վեց նահանգների ինքնավարության խնդիրը և 1914-ի հունվարի 26-ին Թուրքիայի հետ արդեն կնքվել էր բարենորոգումներ մտցնելու համաձայնագիր: Նորից աշխուժացել էր ազգային կյանքը, թևավորվել էին խաղաղ աշխատանքային երազանքները: Թոմաստիկ այդ երազանքով էլ պարուրված է Վարուժանի հայ գյուղացին: Նա հանդես է գալիս իբրև ազատագրված հայրենիքի զավակ: Այդ պատճառով էլ նա ոչ թե ընկճված է, այլ հսկայացված: Նրա կրծքի տակ բաբախում է «սիրտը հողին», ճակտին փայլում է արևի համբույրը: Դա օտարի լուծը թոթափած առույգ, «հաղթահասակ», ստեղծագործող գյուղացին է, որի սերմով լի բուռը «արտերուն վրա՝ զերթ արշալույս կբացվի»: Նա մեծ հոգի ունի, նա օրնություն է թափում աշխարհի վրա՝ հանուն իր սերնդի և ամբողջ մարդկության: Այս մեծ մարդասիրությունը նրան դարձնում է «աստվածների պես կանգուն», որ «արևն առած ճակտին վրա» աշխատում և երգում է «վաղվան հույսով»: Անհունից անհուն ժխացող նրա երգը, արևը ճակտի վրա և պայծառ հույսը՝ ժողովրդի լավատեսության մարմնացումն են «Հացին երգ»-ում:

Այդ լավատեսությունը գեղարվեստական արտահայտություն է ստացել հիմնականում ուղեւորական սկզբունքով: «Հերկեր»-ը, «Կամեղ»-ը, «Ճաշակում»-ը բնականորենում վերստեղծված են անգամ փոքրիկ մանրամասնությամբ՝ կամի «կայծքարե սուր ակոսները», «հասկին բոց մորուքը», եղան բնթացրի ծուլությունը, կալից անբաժան մղեղը և այլն, սակայն այս տիպիկ, իրական դժերը չեն փոխում վարուժանական պատկերի ուղեւորական բնույթը, բնական ուղեւորական տեսանկյունը,

«Հացին երգ»-ում Վարուժանը մեր առաջ բացում է հայրենի բնության սրանշելի պոեզիան, հայ գրականություն բերելով ժողովրդական կյանքի գույների ու երանգների, հողի և մարդու գեղեցկության անհուն զգալիություն: Այստեղ նա հանդես է գալիս իբրև գյուղական բնական արտահայտված վարպետ: Նրա բնականորեն շլացնում է արտասովոր կենսալիությունը, կերտվածքի ներդաշնակությամբ, բնականությամբ և կոլորիտով: Իսկ կարծես իրականությունից պոկված բաբախուն մի հատված է, ուր չկա պոեզիան կյանքից բաժանող ոչ մի արհեստական գիծ կամ անիրական հնչյուն:

«Հացին երգը» ներթափանցված է մարդկային մեծ ապրումներով, ժողովրդական պարզ կենցաղի խորունկ զգացողությամբ: Այստեղ առավել ակնառի է ժողովրդին մոտենալու վարուժանական տեղեկացը: Հայրենիքի ճակատագրով ապրող բանաստեղծը ձգտում է «մարգարիտներ պրպտել» բանարվեստի ակունքներում¹²: Դեռ Գանդի համալսարանում սովորելիս նա բնկերտը գրում էր. «Անպատճառ ամբողջ Հայաստանը պետք է տեսնել: Կուղեմ համբուրել բոլոր այն տեղերը՝ որ նահատակ մը ինկավ կամ հերոս մը կոխեց: Մենք այնքան մեծ ենք՝ որքան որ հողեն կը խմենք մեր զգացումները»¹³:

Վաղ տարիներից բանաստեղծին հետաքրքրել է գավառը, ուր ժողովրդի հոգու «ամբողջությունը կապրի... հողը, գունագեղ, իրապաշտ իր աշուղներու հույլերով»: Նա հմայվել է ժողովրդական երգերի «իրապաշտական» արվեստով, սեղմությամբ, ձևի և բովանդակության ներդաշնակությամբ, պարզությամբ, բնաշխարհիկ երանգներով: Նա գնահատում է «մտածումը կարելի եղածին չափ թիչ բառերով բացահայտելու արվեստը», որ ստեղծվում է տքնությամբ՝ «Մեկը կրնա բառարանի բոլոր բառերը գիտնալ ու դարձյալ չկրնալ երկու նախադասություն գեղեցիկ կերպով քով քովի բերել,— գրում է նա,— վասնզի խրեղիբ բառերը գործածելուն մեջ չէ միայն՝ այլ անոնց նրբությունները, պատկերները, զգացողությունները իրարու հետ պատշաճելուն մեջ»¹⁴: Սեղմությունը նա պարտադիր է համարում ամեն մի մեծ գրողի ոճի համար. լավ գրությունների ոճը «միշտ սեղմ, զրուտ ու ցայտուն է»: «Պետք է խույս տալ ավելորդին,— ասում է նա,— շատախոսությունն, երկրորդական գաղափարներու աճումներեն՝ որոնք տիրող գաղափարի վրա բան մը չավելցնելով հանդերձ՝ զայն կը տկարացնեն»¹⁵: Սեղմության այսպիսի պահանջներին ամենից առաջ բավարարում է հենց ժողովրդական երգը, որի ձևերը օգտագործել է Վարուժանն իր պոեզիայում:

¹² «Մեհյան», Կ. Պոլիս, 1911, N 3, (ս. 17):

¹³ 1908-ի Նոյեմբերին Գանդից՝ Ի. Նիդմանյանին գրած նամակից (Դանիել Վարուժան, Գանդի, 1955):

¹⁴ «Նովապարզ», 1921, Ա հատոր, Թ պրակ, (ս. 260):

¹⁵ Նույն տեղում, 1925, Բ տարի, Թիվ 2, էջ 38:

Ճ: Հանդես. N 1

Դա առավել ցայտուն դրսևորվել է «Հացին երգ»-ում, ուր սեղմ ձևերի մեջ ոչ միայն բնության, հողի և մարդու պատկերն է ստեղծված, այլև արտահայտված են մարդկային նուրբ ապրումները:

Ժողովրդական կյանքով ներթափանցված այդ ապրումները կապված են թե՛ աշխատանքային պրոցեսների, և թե՛ սրտի նվիրական գաղտնիքների հետ: Օրինակ, ամբողջովին սիրո ապրումներով է տոգորված «Հունձք կը ժողվեմ» աշխատանքային երգը, ուր սիրո դրաման դրսևորված է ընդամենը շորաբառով:

— Լուսնակը յարս է,—

• • • • •
— Սիրածքս հարս է:—

Որքան անհնար է առաջինը, նույնքան՝ երկրորդը: Լուսինը յար չի լինի, ինչպես և ուրիշի հարսը չի հասնի իրեն: Եվ այս անկարելին կանգնում է հրնձվորի վառ տենչերի առջև՝ մինչև լուսադեմ, մինչև աշխատանքի վերջը: Գիշերն ամբողջ մշակը հնձում է խաղեր ասելով, որ կրկնապատկում է նրա ուժերը նա դեզերից լեռ է շինում, մինչդեռ լուսինն անցնում է և նա պիտի բաժանվի սիրո վառ ցնորքից, այրող կրակը սրտում:

Մանգաղս բուրի՛ն եկա՛լ:

— Յարս յա՛ր ունի —

Քարեն լորիկը բոռա՛մ

— Լե՛րդս կ'արյունի:—

Որքան կուռ և ուժեղ, նույնքան սեղմ, իմաստալի և կոլորիտային երանգներով է հագեցած «Հացին երգը»: «Բնական, ճիշտ և պարզ» պատկերները, դրանց հակադրություններն ու համադրությունները ներքին այնպիսի խոր կապերով են միացած հերոսի ապրումներին, որ ուղղակի նրա արտահայտության մի ձևն են: Վերոհիշյալ քառատողում մանգաղը քարին առնելը, որ վառ նշան է համարվում, հիշեցնում է անողոր իրականությունը՝ «յարս յար ունի»- Հաջորդող «քարեն լորիկը թռավ» տողում, թվում է՝ ոչ թե լորիկը, այլ սիրածո ձեռքից թռավ: Մշակի շքեղ երանգները փշրվում, անցնող լուսնի հետ շքանում են, և այդ բոլորից նա սթափվում է սրտի խոր կսկիծով:

— Լե՛րդս կ'արյունի:—

Վարուժանի պոեզիայի արտահայտչական միջոցների հարստությունը, ինչպես և տաղաչափական բազմաղանկությունը զգալի չափով գալիս է ժողովրդական ակունքներից: Մական ժողովրդայնությունը նրա արվեստում չի ահմանափակվում բանաստեղծական առանձին ձևերի օգտագործումով, այլ երկի ամբողջ հորինվածքի ոգով, տարգրությամբ, հարազատ և սեղմ արտահայտությունների ու ոճերի հարստությամբ, բնաշխարհիկ գույների և երանգների հագեցվածությամբ և առհասարակ ձևի և բովանդակության ժողովրդայնացման այն բուռն տենդենցով, որ առավել ցայտունորեն դրսևորվել է «Հացին երգ»-ում: Իսկ սա բարձր արվեստի արտահայտություն է:

Մեծատաղանդ քերթողը խոշոր վաստակ ունի նաև հայ բանաստեղծական լեզվի մշակման բնագավառում: Նրա լեզվի մեջ, բացի ժողովրդականից, խտացել են հազարամյա գրական մշակված ձևեր՝ սկսած խորենառու ու մինչև

Ա. Բագրատունին, Ալիշանը և Դուրյանը: Վարուժանի մեծ ծառայությունն այն է, որ գործածության մեջ դնելով՝ կենդանություն է տվել բաղմաթիվ բաների և բառաձևերի, ստեղծելով արտահայտության թարմ, ինքնատիպ, դորեղ միջոցներ: Այդ տեսակետից նա, ինչպես Վ. Տերյանը, ոչ միայն հարստացրել, այլև մի տեսակ լարել, պրկել է հայ բանաստեղծական լեզուն, դարձնելով առավել հնչեղ և հզոր: Նրա պոռթկումնալի, ջղուտ խոսքի մեջ զգալի է սանձահարկած երևակայության, հույզի և մտքի վիթխարի թափ: Այս կողմից նրան հարադատ է ն. Զարենցը:

Հանրագումարի բերելով հայ բաղմադարյան գրական նվաճումները, յուրացնելով համաշխարհային գրական մշակույթը՝ «Հումերեն մինչև Մետերլինդ»¹⁶, Վարուժանը իրոք հասավ պոեզիայի բարձունքը՝ «ապագային մարդերուն» նվիրելով «հզոր երգ մը»: Ի՞նչ այդ հզոր երգով էլ մեծ բանաստեղծը մեր պատմության ճգնաժամին կանգնեց աշխարհի առջև իրրև հայ ժողովրդի վշտի և ցասման, արդարության և սիրո զգացմունքների բոցաշունչ թարգմանք:

ПОЭЗИЯ ДАНИЭЛЯ ВАРУЖАНА

(К 50-летию со дня смерти)

Г. Г. РИТУНИ

(Р е з ю м е)

В начале XX в. поэзия западных армян пережила исключительно интересный период своего развития. За десятилетие на литературную арену выступило целое поколение одаренных поэтов, поднявших армянскую поэзию на высокую ступень. Самый крупный представитель этого поколения — Даниэль Варужан. В его творчестве отражены трагедия и сила борения армянского народа, героический дух его прошлого, современные вопросы и национальные чаяния.

Будучи глубоко национальным поэтом, Варужан в то же время певец общечеловеческих дум и тревожений. Жизненные проблемы народа он связывает с судьбой страдающего человечества. Осуждая буржуазные нравы, он развивает в «Языческих песнях» принцип близости к природе, воспекает «силу и красоту» свободолюбивых, сильных духом людей. Целый ряд песен он посвящает жертвам капитализма, жизни и борьбе рабочего класса. Эти песни проникнуты передовыми идеями века, отражают страдания эксплуатируемых масс, их революционный дух.

От «Содроганий» до «Сердца племени», от «Языческих песен» до «Песен о хлебе» Варужан прошел сложный и большой путь исканий и непрерывного подъема. Он выступил как новатор, выявляя новые темы и поэтические формы. Используя завоевания романтизма и реализма, он создал большое богатство выразительных средств, свежие, самобытные и

¹⁶ «Բաղմազեպ», Վենետիկ, 1931, № 11, էջ 494:

колоритные художественные образы, поражающие своим необычным размахом, красотой эмоций и остротой мысли.

Творчество высокоталантливого поэта было связано с народом и его многовековой литературой глубокими корнями. Содержание его поэзии, проникнутой народностью, обусловлено также теми роковыми событиями, которые имели место в Турции в период между 1895—1896 гг. и первой мировой войны.

Даниэль Варужан был зверски убит турецкими палачами во время массовой резни западных армян в 1915 г.